



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԻՎԱՆ ԼԵՐԵԳԵՎ

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐ

Պ Ի Ե Ս

չորս գործողությամբ

Թարգ. Գ. ՎՈՍԿԱՆՅԱՆԻ




ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐ

Պիես չորս գործողությամբ

Քարզմ. Գ. ՎՈՍԿԱՆՅԱՆ

160576 A $\frac{I}{8209}$



ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,

ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29

ԳՐԱՌԵՊ. 764բ

ՏԻՐԱԺ 2000.

Ա Ն Ա Ս Տ Վ Ա Ծ Ն Ե Ր

Պիեսսա 4 գործողությամբ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Բ

ՔԱԹՈՒԼԻԵՆՑ ԴԱՎԻԹ.—50 տարեկան մի գյուղացի,
լիար և բարձրահասակ, հեղ և բարեպաշտ
արտաքինով:

ՇՈՒՇԱՆ.—Նրա կինը, փորձված և հաստատուն բնա-
վորության տեր մի կին:

ԳՈՒՐԳԵՆ.—Նրանց փորդին, 24 տարեկան կարմիր
բանակային:

ԶՎԱՆԹ.—Նրանց աղջիկը, գեղեցիկ, առողջ և խե-
լացի մի աղջիկ:

ՍՈՒՐԵՆ—Զվարթի ամուսինը, զարգացած գյուղացու
տղա:

ՄՏԵՓԱՆ.—Դավթի յիզրայրը, 51 տարեկան, ամբա-
կազմ, առողջ, միջահասակ, մշտապես կեն-
սուբախ և ինքնագոհ:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴ.—Գյուղական քահանա, փնթի, բրզոտ,
հարբեցողի փքված գեմքով:

ՄԱՐԱՆ.—Քահանայի կինը:

ՏԻՐԱՑՈՒ.—Հաղթանդամ, մոտ 40 տարեկան, զվար-
ճախոս մի մարդ:

ՅԵՍԹԵՐ.—Յեկեղեցու հացակեր, նշխարք պատրաստող մի կին, նախկին կույսերից, 35 տ.:

ՈՀԱՆ.—40 տարեկան մի գյուղացի:

ՀԱՄԲՈ.—Յեկեղեցու ծառան:

Գործողութիւնը տեղի յե ունենում մի գյուղում: Յերբորդ գործողութիւնից մինչև չարքորի անցնում ե լերեք շաբաթ:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մերնիքը կահավորված է միջակ: Շուռանը
սանն իր գործով է զբաղված: Ներս է մտնում
Դավիթը արձակում է գոսին յեվ հանվում:

I.

ԴԱՎԻԹԸ ՅԵՎ ՇՈՒՇԱՆԸ

Դավիթ. — Գուրգենից նամակ եմ ստացել:

Շուշան. — (Ուրախացած): Ի՞նչ է գրում:

Դավիթ. — Ձեմ իմանում, չեմ կարդացել:
Պե՛ս յես ի՞նչ կարդացող եմ, աչքերս ել մի տե-
սակ թուլացել են: Բա Ձվարթն ո՞ւր ե: Գոնե՛
նա կարդար:

Շուշան. — Ուր է Ձվարթը... Ել ո՞ւր պի-
տի լինի, պատերի տակը, մի տեղ իր մարդա-
ցուի հետ սիլի բիլի յե՛ն անում:

Դավիթ. — (Նստորեն): Տես ինչ եմ ա-
ռում, Շուշան, վերջին անգամը լինի. պիտի

վերջ տալ դրան: Յես վճռել եմ Մուրենին՝
մերժել... Յես եղ բանին իմ համաձայնությունը
չեմ տա և վոչ ել եղ պսակը կորհնեմ, քանի
վոր եղ տղեն խելքից թեթև ե:

Շ ու շ ա ն .— Ի՞նչ, դու կարծում ես,
նրանց շատ պետք է քո սրհնությունը: Հիմի ա-
ռաջվա ժամանակը չի կգնան Զագս, կգրվեն
և վերջացավ: Տերտերին ել, մեզ ել ջհանդամք
կուղարկեն:

Դ ա մ ի թ .— Դե տեսնենք:

Շ ու շ ա ն .— Կարիք ել չկա տեսնելու,
հենց եղպես կլինի, տես, կհիշես ասածս:

(Երբս և մտնում Զվարթը՝ ուրախ և կարմ-
րատակած):

II.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ԶՎԱՐԹԸ

Շ ու շ ա ն .— Եղ վճրտեղ եյիր ամբողջ որք
զվրնում: Գնայիր գոնե հավերը հավաքեյիր:

Զ վ ա Ր թ .— Յես արդեն տեսա, բոլորն ել
թառին նստած են:

Դ ա մ ի թ .— Տես ի՞նչ եմ ասում քեզ
Զվարթ, մի քիչ չափավոր յեղիր, թե չե եղքան
ման զալ չի լինի, վճրտեղ եյիր մինչև հիմի:

Զվարթ.— Հովակիմենց տանն էյի. Սի-
մոնն ենտեղ նոր լրագիր եր կարգում:

Դավիթ.— Վոր լրագիր եր կարգում, եդ
վոչինչ, բայց դու նրանից հեռու կաց, հերիք ե
նրա հետ ընկնես, մտքովդ բոլորովին չանց-
կացնես, թե դու նրան առնելու յես:

Զվարթ.— (Հաստատ և համարձակ): Ի՞նչու
համար:

Դավիթ.— Նա փչացած մարդ ե, ահա
թե ինչու, քրիստոնեական հավատը նա վոս-
նատակ ե անում և սրբերի վրա ծիծաղում ե...
յես եդ տեսակ խելքից պակասներին աղջիկ
կտամ...:

Զվարթ.— Հայրիկ, կարելի յե մեկին տալ
հագուստը, կոշիկը կամ կովը, չափահաս աղ-
ջիկը կարող ե ամուսնանալ ում հետ վոր ու-
ղում ե, մոռացիր հին ժամանակը, հայրիկ:

Շուշան.— Ճիշտ ե աղջիկս, ճիշտ ե:
(Դառնալով մարդուն) Բա չե, լուսավորչի կրոնը,
սրբերը մինչև այժմ շատ բան են տվել մեզ
չե: Դու ես ամբողջ 30—40 տարի աղոթել ես,
ձեռքդ ի՞նչ ե ընկել:

Դավիթ.— Տես ի՞նչ եմ ասում Շուշան,
յես ու դու ես տարիքին, մոլորված մտքերով
չպիտի տարվինք— եդ խայտառակութուն ե:

Շ ու շ ա ն . — Դու ել, ենքան խոսեցիր, վոր
Գուրգենի նամակը մոռացար:

Դ ա մ ի թ . — (Ձեռքը տանում և գրգռնուր, հա-
նում և նամակը և տալիս Չվարթին: Հոնքերը կիտած
տոտափների տակից): Կարգա:

Չ վ ա թ . — (Բայ և անում նամակը): Տես-
նենք, թե ինչ լավ-լավ բաներ և գրել իմ յեղ-
բայը Գուրգենիկը: (Կարգում և): «Սիրելի հայ-
քիկ, մայրիկ և Չվարթուկ քույրիկս: Յես վողջ
և առողջ եմ, վորը և ձեզ եմ ցանկանում
սրտանց: Յես արձակուրդ եմ ստացել և
գալիս եմ ձեզ մոտ: Սպասեք ինձ որ
ավուր: Ինձ հետ միասին գալու յե նաև հոր-
յեղբայր Ստեփանն իր անեցոցը տեսնելու: Իմ
ընկերական բարևը հասցընք Կարոյենց Սիմո-
նին, վորն իմ հասակակից լավ ընկերներին
մեկն ե: Մնաք վողջ և առողջ: Ձեր վորդի և
յեղբայր Գուրգեն թնթուլյան»:

Չ վ ա թ . — (Արագ վեր և կենում): Գնամ
կոպին մի նայեմ: Լավի կա՞մ, թե չե, վոր տանեմ
կոպին տանեմ, կա: (Վերցնում և լափով լցրաջ
վեղրոն և գնում և):

Կրակն և վառվում, մոմն և հարվում,
Դարբասի մոտիկում շունն և հաջում,
Որ հաջիր շուն, մի, խնդրեմ,
Թող, վոր իմ յարին գովեմ:

Դ աս վի թ.— (Մտածելուց հետո): Այ քեզ
բան: (Ներս և մտնում Գուրգինը տոպրակով և շա-
մադանով, համբուրվում և ծնողներին հետ):

III.

ԴԱՎԻԹ, ՇՈՒՇԱՆ ՅԵՎ ԳՈՒՐԳԵՆ

Գ ու ը զ ե ն.— Դե՛հ, ի՞նչպես եք:

Դ աս վի թ.— Ե՛հ, փառք աստծո: Հացներս
կա, ձին և կովը կան. ուրիշներին վատ չենք:

Շ ու շ ա ն.— (Ինքնագոհ ժպտում և, նայելով
Գուրգինի վրա): Բալես, իմ բալես, թող մի կա-
րոտս առնեմ, ի՞նչ շաղացել ու սիրունացել ես:

Գ ու ը զ ե ն.— (Ուրախ): Ե՛հ, յես ել ուրիշ-
ներին վատ չեմ, ինչպես հայրիկն ասաց:

Շ ու շ ա ն.— Յեթե գյուղում մնայիր եզ-
պես չեյիր դառնա:

Գ ու ը զ ե ն.— Ի՞նչու վոր, մի՞թե գյուղը
մարդկանց ալանդակում և: Եդ, իզուր ես եզ-
պես ասում, մայրիկ:

Շ ու շ ա ն.— Բա ի՞նչպես, մի՞թե կարելի
յե գյուղը քաղաքի հետ համեմատել: Թե՛ ես-
տեղի ժողովուրդն և տարբեր և թե՛ նրանց վար-
մունքը: Ենտեղ մարդու աչքը բացվում և:

Դ աս վի թ.— Իսկ մենք եսոր քեզ չեյինք
սպասում, չեյինք մտածում, վոր կգաս: Հենց
նոր ստացանք քո նամակդ:

Գ ու ւ ր գ ե ն ն . — Ա յ ք ե գ բ ան ն , ն ա ի ս ան ց յ ա լ շ ա ր ա թ վ ա յ ե ր ե ք շ ա ր թ ի ո ր ն ե մ գ ր ե լ , 2 շ ա ր ա թ ի ց ա վ ե լ ի յ ե կ ն շ ա ն ա կ ե , ի ն չ , ն ա մ ա կ ա ի գ ու ր ե ս ս տ ե ր - ե ն տ ե ր պ տ ու յ ա ե յ ե կ ե լ :

Շ ու ւ շ ա ն ն . — Դ ե Գ ու ւ ր գ ե ն ն ջ ա ն , ս ե դ ան ի ն մ ս տ ե ց ի ր , վ ո ր ճ ա շ ր բ ե ր ե մ , շ ո ր վ ե ն թ ո ն ր ի մ ե ջ ր տ ա ն ք , տ ա ք ե :

Գ ու ւ ր գ ե ն ն . — Չ ե , մ ա յ ր ի կ ջ ա ն , յ ե ս կ ու շ ա ե մ : (Չ ե ո ք ր տ ա ն ու մ ե չ հ մ ո գ ան ր) : Յ ե ս ե մ ձ ե գ պ ա տ վ ե լ ու , տ ե ս ն ք , ե ս տ ե ր կ ա լ ր ա ս ե լ ու ն ե մ , ս ե լ յ ո գ կ ա յ ե լ :

Շ ու ւ շ ա ն ն . — Վ ո ր ե գ պ ե ս ե , յ ե ս թ ե յ պ ա տ ր ա ս տ ե մ :

Գ ու ւ ր գ ե ն ն . — Ի ն չ ե մ ա ս ե լ : (Հ ա ն ու մ ե չ ա մ ա գ ան ի ց) : Ա ն ա ք ե գ ն վ ե ր հ ա յ ր թ ի կ , կ ե ս Ֆ ու ն ա լ ա վ մ ա խ ո ր կ ա : (Շ ու ւ շ ա ն ի ն) : Ե ս ե լ ք ե գ ու Ջ վ ա ր թ ի ն մ ի - մ ի թ ա շ կ ի ն ա կ : (Ն ա յ ու մ ե խ ր ճ ի թ ի չ ո ր կ ո գ մ ր) : Բ ա ու ր ե Ջ վ ա ր թ ր :

Շ ու ւ շ ա ն ն . — Կ ն ա ց ե լ ե կ ո վ ի ն ն ա յ ե լ ու : (Ը ն կ ն ու մ ե վ ո ր գ ու վ գ ո վ ն ու հ ա մ ր ու ր ու մ ե ն ր ա ն) : Ի մ ք ա դ ց ր ի կ ա , մ ե գ չ ե ս մ ս ո ա ց ե լ : (Դ ի ա ու մ ե թ ա շ կ ի ն ա կ ն ե ր ր) : Ո՞վ գ ի ա ե ի ն չ ք ա ն թ ա ն գ ե ս ա ո ե լ :

Գ ու ւ ր գ ե ն ն . — Թ ա ն գ թ ե ե ժ ա ն , ա ք գ ե ն ն

անցել եւ Շնորհավոր լինի: (Դառնում ե գեպի դուռ): Գնամ Զվարթին դիմավորելու: Տես թե ինչպես պիտի զարմանա... Ամբողջ յերկու տարի միմիանց չենք տեսել: (Գնում ե):

Դա վիթ.— Բա եղպես բան կլինի, Շուշան:

Շուշան.— (Բարկացած): Ի՞նչ ե, ե:

Դա վիթ.— Ի՞նչպես թե ինչ ե: Միթե դու չզգացիր, վոր մի բերան ասածու անունը չտվեց:

Շուշան.— Ի՞նչ անենք վոր: Եզ իբա գործն ե, ինչպես յերևում ե, յես ու դու չե, վոր նրան պետք ե խելք սովորեցնենք, նա մեզանից ավելի խելոք ե:

Դա վիթ.— (Տխուր տխուր գլուխը շարժում ե): Ե՛հ, ե՛հ, ա՛յ քեզ բան:

(Ուրախ ներս են մտնում Գուրգենն ու Զվարթը):

IV.

ԴԱՎԻԹ, ՇՈՒՇԱՆ, ԳՈՒՐԳԵՆ ՅԵՎ ԶՎԱՐԹ

Գուրգեն.— Յես մտացա ձեզ ասել, վոր հորեղբայր Ստեփանն ել ե ինձ հետ յեկել: Նա գնաց իբ տնեցոց տեսնելու, հիմի վորտեղ վոր

ե, իսկույն կգաս: (Հպարտությամբ նայում ե քրոջ վրա): Տես ե, ի՞նչ քույր ունեմ: (Համբուրում ե քրոջը): Աղջիկ եմ ասում ե, աղջիկ. եսքան ել լավիկ կլինի՞, վոր նա յե: (Գառնալով ծնողներին): Կարող ենք պարծենալ ե, վոր եսպես աղջիկ ու քույրիկ ունենք:

Զվարթ.—(Ծիծաղում ե), Այո, խելոքների խելոքը, գեղեցիկների գեղեցիկը:

Դավիթ.—Ստեփանը ի՞նչպես ե, Ստեփանը:

Գուրգեն.—Վոչի՞նչ, նա շատ լավ ե: Դավ պաշտոն ունի, գործի մարդ ե և որինակելի յել կոմունիստ:

Դավիթ.—(Շշմելով վորդու խոսքերից) Ի՞նչպես, մի՞թե նա յել կոմունիստների մեջ ընկավ, իմ յեղբանքը, Ստեփանը:

Գուրգեն.—Ի՞նչ ե նշանակում ընկավ: Մտել ե կոմունիստների կուսակցության մեջ: Եստեղ ի՞նչ գարմանալու բան կա վոր:

Դավիթ.—Ի՞նչպես թե... ուրեմն ասածույն կեղեցիկն չի՞ գնում, քրիստոնեական հավատը չի՞ ճանաչում:

Գուրգեն.—Յեվ վոչ միայն քրիստոնեական, այլ վոչ մի հավատ չի ընդունում: Յես ել եմ կոմունիստ չե՞, յես այդ մասին չե՞ վոր քեզ գրել եմ:

Զվարթ. — (Ծափ և տալիս)։ Ի՞նչ լավ ելավ՝
 Հիմի մի բոլ կիսոսենք միմիանց հետ։

Շուշան. — (Մոտենում և համբուրում և վոր-
 դուն)։ — Ե՛հ քաղցրիկս, ինչպես մեզ ուրախացրի՞ր
 զալովի։ (Զվարթին), Վաղը պետք և հավ մոր-
 թենք — «Փուփուլին» կամ «Կաքավին» — նրանք՝
 վաղուց և ձվից կտրվել են։ Բաժակները բեր։

(Ինքնայեսի շուրջը դորձ և անում։ Զվար-
 թը փուռ և սփոռցը և թեյի ամանները
 սեղանի վրա դնում։ Ներս և մանում։ Մտե-
 փանը և բարեում և բոլորին համբուրելով)։

V.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՍՏԵՓԱՆԸ

Ստեփան. — Ե՛հ, ինչպես եք, վողջ ու
 առողջ եք։

Դավիթ. — Ե՛հ, ինչպես տեսնում ես էլի։

Ստեփան. — Ի՞նչ մի տեսակ ենպես թըմ-
 րածի պես ես, կասես մի յերկու ամիս անկող-
 նու մեջ պառկած լինես։

Դավիթ. — Բայց փոխարենը դու վողջ և
 առողջ ես։

Ստեփան. — (Հանաքով խփում և փորին)։
 Այո, վողինչ, մի կերպ որ ենք անցկացնում
 քաղաքի հացը վրա յե զալիս։

Գ ա մ ի թ. — Գե՛հ ուրեմն շնորհակալ յեղիբ
ասածուց, վոր նա եղպես մեծ բարերարություն
ունի դեպի ձեզ:

Ս տ ե փ ա ն. — Աստվածս վճրն է, է՛. զար-
մանալի բան: Շատ աշխատիր, կուշտ կուտես,
լավ ել կապրես, ել ի՞նչ աստված:

Գ ա մ ի թ. — (Գլուխը տար ու բեր ե անում), Ե՛հ
Ստեփան, Ստեփան, ի՞նչ է պատահել քեզ:

Ս տ ե փ ա ն. — Առանձնապես, վոչի՛նչ:

Գ ա մ ի թ. — Իսկապես մի՞թե այդ ճիշտ է:

Ս տ ե փ ա ն. — Ի՞նչը:

Գ ա մ ի թ. — Վոր դու անհավատ կոմունիստ
ես դարձել, և քրիստոնեական կրոնը մոռացել ես:

Ս տ ե փ ա ն. — Այո, եդ ճիշտ է, յես հիմա
վոչ աստված եմ ճանաչում, վոչ քրիստոս:

Շ ու շ ա ն. — (Ինքնայեղ սեղանի վրա յի դը-
նում), Գե նստեք, նստեք տեսնեմ, թեյ խմենք:
(Բոլորը, բացի Շուշանից, նստում են սեղանի շուրջը:
Չեաքերը մեկնելով դեպի բոլորը), Հիմի տեսեք,
բարեկամներս, տեսեք, թե յես ի՞նչ եմ ասելու
մեր տերտերի մասին. նրա կոչումն այն է, վոր
նա ամբողջ որը հարբած է:

Գ ու ը ղ ե ն. — (Դանալով դեպի հայրը, ցույց
տալով մոր վրա), Տես, հայրիկ, ումից պեսք ե
խելք սովորես:

Գ ա մ ի թ. — Շնորհակալ եմ, վորդիս: Սա-
տանեն նրա խելքը գլխից գողացել ե: (Նայում ե
Շուշանին և գլուխը տարուբերում է): Ո՞ք, կորած
հոգի:

Շ ու շ ա ն. — (Մատուցում է բուրբին ւրբած
քաժակները. դառնալով Ստեփանին և Գուրգենին)
Սմեք, թանկագին հյուրեր, խմեք. այդ խոսակ-
ցությունները հետաձգենք մի ուրիշ անգամվա:

Գ ա մ ի թ. — (Բռնում է Ստեփանի ուսից): Գու-
շե՛ վոր քիչ առաջ ասացիր, թե ի՛նչ աստված, ի՛նչ
բան: Ձե՛ վոր ամեն ինչ նրա ձեռքն է և նրա
կամքով:

Ս տ ե փ ա ն. — (Ցույց է տալիս իր ձեռքերը):
Վոչ, տես թե ում ձեռքումն է—բանվորի և
գյուղացու ձեռքումն են՝ իմ և քո ձեռքում:
Մեզ վրա իշխում է աշխատանքը—մուրճն ու
մանգաղը: Փորձիր հողը վոչ վարի և վոչ ել
ցանի, կտեսնես՝ քաղցից կմեռնես, փորձիր ցա-
խի պատրաստություն մի տեոնի, ձմեռը ցըր-
տից կսառես:

Գ ա մ ի թ. — (Խորը հոգոց է քաշում): Ե՛հ, ախ-
պեր, ախպեր, ինչպես են քեզ քաղաքում իս-
կույն անաստված դարձրել:

Ս տ ե փ ա ն. — Վոչ թե դարձրել են, այլ
ինձ խելքի յեն բերել, իմ կույր աչքերը բա-
ցել են:

Գ ու ւ ր գ ե ն ւ . — (Մինչ այդ լուս մնացած) Ե Այո, լենինը և խորհրդային իշխանությունը արթնացրին, բանվորներին և գյուղացիներին:

Զ վ ա ր թ . — (Անհամբերությունը թույլ չի տալիս լսել): Իմ սիրելի հորեղբայր և Գուրգենիկ, ի՞նչ լավ եք խոսում յերկուսդ ել:

Գ ու ւ ր գ ե ն ւ . — (Հորը): Դու ես բանի վրա մտածիր, հայրիկ. մեզ մոտ, Հայաստանում, դաշնակնների ժամանակ հացի սով եր, քիչ մարդիկ սովից չկոտորվեցին, շատերը նույնիսկ շան ու կատվի միս եյին ուտում: Ի՞նչու նրանց համար ամպերից յերկնքի մանանա չեկավ:

Դ ա վ ի թ . — Յերբ մարդիկ բարեպաշտ եյին, նրանց համար մանանա յիլ եր իջնում, իսկ հիմա բոլորը մեղքի մեջ կորած են, դրա համար ել աստված մարդկանց պատժում ե:

Գ ու ւ ր գ ե ն ւ . — Իսկ ի՞նչ եյին արել հարյուրավոր և հազարավոր փոքրիկ յերեխաները, վորոնք նույնպես տանջվում եյին ու վոչնչանում շ

Ս տ ե փ ա ն ւ . — Դե, հենց եդ բանի վրա միայն մտածիր:

Դ ա վ ի թ . — Կարիք չկա վոր մենք եդ բանի վրա մտածենք, աստված ինքը գիտե՞ ի՞նչ եր անում. նրա գործերը մեզ անհասկանալի յեն շ

Շ ու շ ա ն . — (Ա մ ու ս ն ու ն) : Ա յ , մ ար դ դ ր ա ն օ
պ ի տ ի լ ս ի և վ ո շ թ ե տ եր տ եր ի ն : Ե դ պ ե ս ե ը
ա ն տ ա շ մ ար դ կ ի ի ն ի ֆ , վ ո ը դ ա յ ե :

Գ ու ը ղ ե ն . — Ք ե գ պ ե ս կ ո ղ ը ք ա հ ա ս ս տ մ ար դ ,
հ ա յ ը ի կ , հ ի մ ի շ ա տ ք ի չ կ ա : Հ լ ա մ ի լ ա վ մ տ ա -
ծ ի ր : Հ ն ն ց մ ի ա յ յ մ ա ս ու ն ք ն ե ը ր ը ա չ ք ո վ զ տ ե ս -
ն ե լ ը ք ե գ խ ե լ ք ի կ ը ե ը ի :

Զ վ ա ը թ . — (Գ ո հ ու ն ա կ ու թ յ ա մ ր և ու ը ա ի ր
կ ե ը պ ո վ ն ա յ ու մ ե յ ե դ ը ը ը վ ը ա : Կ ա մ ա ց ու կ) : Ճ ի շ տ ե
Գ ու ը ղ ե ն , շ ա տ ճ ի շ տ ե :

Դ ա վ ի թ . — (Հ ո զ ո ց ե հ ա ն ու մ , գ լ ու ի ը կ ա ի ք
զ ց ե լ ո վ) : Տ Ե ը Ք ը ի ս ա տ ո ս :


Գ ու ը ղ ե ն . —

Մ հ ա ն ո ը ի ը ի ն ե ն ա ն ց յ ա լ ի .
Դ ա ը ձ ի կ ե ն ք ը ա ը ե կ ա մ ս ի ը ի լ ի ,
Չ ա պ ը ն ք ե ն պ ե ս , ի ն չ պ ե ս հ ն ու մ ,
Ա ս տ վ ա ծ ու ց ա ը ն ե յ ի ն ա պ ը ու մ :
Բ ո լ ո ը ր ս ե լ դ ա ը ձ ե ը ե ն ք ա ն կ ա լ ս ,
Թ ո ղ հ ա ղ թ ա ն ա կ ի մ ի շ տ մ ու ը ը ճ - մ ա ն զ ա ղ ,
Յ ե վ հ ա մ ա ը ձ ա կ մ ի շ տ ղ ե պ ա ո ա ջ
Չ ճ ա ն ա չ ե ն ք վ ո շ ս ու ը ը , վ ո շ խ ա չ :

Զ վ ա ը թ . — Գ ու ը ղ ե ն ջ ա ն , զ ը ի ը ե ղ ը ա ու -
ե ը ն ի ն ձ տ ու ը , յ ե ս ու զ ու մ ե մ ա ն զ ի ը ա ն ն ի :

Գ ու ը ղ ե ն . — Կ զ ը ե մ , կ զ ը ե մ , և յ ե թ ե ու -
զ ու մ ե ս շ ա տ ու ը ի շ յ ե ը վ ե ը ե լ գ ի տ ե մ , ն ը ա ն ք ե լ
կ զ ը ե մ :

16056
A I 9209



Զվարթ. — Ո՞վ ե հնարել, Գուրգեն, եղ
յերգերը:

Գուրգեն. — Յես, սիրելիք քույրիկ, յես:

Զվարթ. — (Զարմայած), Ճիշտ ասա, Գուր-
գեն, իսկապէս քո՞ գրածներն են:

Գուրգեն. — Ճիշտ եմ ասում:

Զվարթ. — Ի՞նչ ես ասում, Գուրգեն ջան,
վոյ Կուրգեն. (Փաթաթվում ե նրան), Յես ինչ-
քան եյի յերազում, վոր մի բանաստեղծի տես-
նեմ, այնինչ իմ յեղբայրս հրաշնլի բանաստեղծ ե:

Դավիթ. — (Վերջ ե տալիս մտածունքին և
վեր ե կենում, գլուխը թափահարելով), Լսեք ինչ եմ
ասում ձեզ վորդիս և յեղբայրս: Դուք ինձ չեք
կարող ճամբից հանել. (Բռունցքով խփում ե իր
կրծքին):

Ստեփան. — Ե՛հ, Դավիթ, Դավիթ: Յես
եղ քեզ պես եյի, բայց շատ և շատ խելոք և
լավ խոսքեր լսելով, կարծես վերածնվեցի, մեջ-
ջիցս մի ծանր բեռ ընկավ:

Լսում ե յերեկոյան յիկեղեցու զանգերի
ձայնը: Դավիթը յերկյուղածությամբ աղո-
թում ե: Ուզում ե դուրս գնալ:

Գուրգեն. — Ո՛ւր հայրիկ:

Դավիթ. — Յիկեղեցի. ուխտ եմ արել վոչ
մի ուր յիկեղեցուց յես չընկնեմ: Չեմ մտանա,
ձեզ՝ անաստիածներիդ համար ել աղոթք կանեմ:

Վարող և աստված ձեզ խելքի բերել: Յես քիչ հետո կգամ. մեր տերտերը չի սիրում յեկեղեցին յերկարացնել:

Ստեփան. — Համա սրտանց կազոթես, հոն (Բարակ ձայնով յերգում և, նմանվելով ախրացուներին):

Տեր աստված, պահիր պահպանիր
 Կնոջս, յերեխաներիս և յեզներիս:
 Ուղարկիր կնոջս համար մի հատ շապիկ,
 Յերեխաներիս վտանամաններ
 Յեզներիս մի փոքրիկ սայլ խոտ,
 Ինձ ել մի փոքրիկ տակառ գինի:

(Բարբր, բացի Դավիթից, ծիծաղում են):

Շուշան. — Վայ, ոյինբանգ ախպեր, վայ:

Դավիթ. — (Նայում և յեղբոր վրա, գլուխը տարուբերելով): Վայ, անաստված, անաստված: (Գնում և):

Գուրգեն. — Վոչինչ, մենք շուտով ճշմարիտ ճանապարհը ցույց կտանք նրան.

Շուշան. — Ձե վորդիս, նա ենպես հաստակող աստվածավախ մարդ և, վոր նրան վոչ մի բանով չես կարող համոզել: Ինչո՞ւ յենք մենք վատ ապրում ուրիշներից, վորովհետև նա իր յեղած չեղածը, մինչև վերջին կոռպեկը տերտերներին ու յեկեղեցիին և տալիս: Յերկու սր առաջ մի տարեկան հորթը տարավ տերտերին: Ասում և, թե տերտերը գրեց գրքում, վոր յե-

րեք տարի հոգեհանգիստ կկատարի իր ծնողներին:

Գ ու ը ղ ե ն .— (Գլուխը տարուբերում է): Հորթը վերցրել են... ահա քեզ կողոպուտ. ավագակներից ել ավագակ են. ինչ ասես, առնուժ են ելի:

Զ վ ա ը թ .— Յեվ, Գուըղեն ջան, գիտե՞ս ինչ հրաշալի հորթ եր, մեծ, գեղեցիկ:

Գ ու ը ղ ե ն .— Տես թե յես ինչ եմ մտածել. յերբ հայրիկը շարունակի եղպես համառ ել մընալ, են ժամանակ կթողնենք նրան տերտերներին բաժին: Զվարթը մարդու կգնա, քեզ, մայրիկ ինձ հետ կվերցնեմ, իսկ նա ինչպես ուզում է, թող ապրի: Բայց հնարավորության շափով կոգնեմ հայրիկին:

Զ վ ա ը թ .— (Հպարտությամբ): Իսկ թույլ տուր հարցնել, Գուըղեն, ո՞վ է քեզ իրավունք տվել իմ բախտը վորոշելու: Գուցե յես բոլորովին չեմ ել ուզում ամուսնանալ:

Ս տ ե վ ա ն .— (Գուըղենին) Գու լավ ընկա՞ր, Գուըղեն հա՛: (Դառնալով Զվարթին) կեցցե՛ս:

Գ ու ը ղ ե ն .— (Զհոքը դնում է քրոջ ուսին և նայում է նրա աչքերի մեջ): Ապա մի ուղիղ նայիր աչքերիս մեջ,

Զ վ ա ը թ .— (Ժիր կերպով) Նայում եմ:

Գ ու ը ր գ է ն . — (Ծիծաղում ե) Դե տես՝ ինչ-
պես կարմրեցիր :

Զ վ ա ր թ . — (Ծիծաղում ե) Բ ու լ ո Ր ը վ ի ն :

Գ ու ը ր գ է ն . — Զե՞ վոր յես ամեն ինչ գը-
տեմ, դու մոռացել ես, վոր նա իմ սրտակից
ընկերն ե :

Զ վ ա ր թ . — (Զղաղարելով ծիծաղելուց, կար-
մըրում ե և գուլիը շուռ ե տալիս) Դա ո՞վ ե վոր :

Գ ու ը ր գ է ն . — Խորամանկություն մի բա-
նացրու : Նա ինձ ամեն ինչի մասին գրել ե .
(Հանում ե գրպանից նամակը և ցույց ե տալիս) :
Ճանաչում ես նրա ձեռքը : Յեվ չե՞ վոր գլխա-
վորապես յեկել եմ քո հարսանիքին :

Զ վ ա ր թ . — Դե, սպասիր, վոր եղպես ե,
յես վաղը դրա համար նրան ցույց կտամ :

Ս տ ե փ ա ն . — (Շուշանին) Վոր եղպես ե
շուտով «գաթի հալվի» պատրաստություն տես
աղջկանդ համար : Հիանալի յե : Ստեփանը հո
միշտ ել յերգ ու խաղի համար մեռած ե : (Զը-
վարթին) Տես թե ինչ հագար ու մի տեսակ շը-
նորհքներ եմ բանեցնելու հարսանիքիդ . յերե-
սուն յերեք տեսակ ձե ու վաթսունվեց յեղա-
նակներ է՛մ պարեգու : Տես թե ինչպես, սյ, սյ
ձեսպես (վոսքերով թրխկացնում ե գետնին) :

Զ վ ա ր թ . — Սպասիր, հորեղբայր, կանգնիր,

հայրս ինձ ասել է, վոր ինձ չի տալու Սուրենին:

Ստեփանն — Պատճառը:

Զվարթ.— Պատճառը վոր նա անաստված է:

Գուրգենն.— Իսկ ինձ Սուրենը գրել է, թե դու և թե մայրիկը պատգամավորուհիներ եք:

Շուշանն.— Հայրդ այդ մասին վոչինչ չգիտե— յեթե իմանա, տեղն ու տեղը սրտաճաք կլինի:

Գուրգենն.— Շատ լավ, Յես շատ ուրախ եմ, Զվարթ, վոր դու եղպրսի մարդ ես ունենալու: (Մորը): Յես հավատացած եմ, վոր դու գրան բոլորովին հակառակ չես:

Շուշանն.— Իմ կարծիքով գրանից ավելի լավ բան քեզ չեր կարելի ցանկանալ: Տղեն դյուղի մեջ առաջինն է:

Գուրգենն.— Գե՛, ուրեմն ամեն ինչ վորոշված է:

Ստեփանն.— (Վեր կենալով նստած տեղից): Իսկ յեթե Դավիթը հակառակի, հարսուհիքը կքսարքենք իմ տանը, մեր տունը լին ընդարձակք իսկ նա թող իր աստվածների հետ խոսի:

Գուրգենն.— (Շմփացնում ե հորեղբոր ուսին):

Իսկապես հորեղբայր, քո տունը շատ մեծ է և փառավոր հարստնիք կանենք:

Ստեփան.— Մի վախենաք, ձեր հորեղբայրը չի մեռել, մի հատ վոչխար կճարի հավնու հնդուհավը կլինի ու կլինի, իսկ պառավու ել գաթա հավեն կթխի: Յեվ լազաթին քեֆ կանենք, ո՛հ, ո՛հ, ո՛հ:

Զվարթ.— (Բոլորի վզովն ընկնելով համբուրում ե), Հորեղբայր ջան, սիրելի մայրիկ և Գուրգենիկ: Միթե ես բոլորը ճիշտ ե: Ուղղակի խելագարվել կարելի յե ես փեսակ բախտից:

Ստեփան.— (Գլխարկը ծածկելով), Իսկ և իսկ թովոուն թրթեոնիկ (դառնալով բոլորին): Դե, լսեք ինչ եմ ասում, վաղ առավոտվանից բոլորդ ել յեկեք ինձ մոտ ընտանեկան խորհրդի, վորին և կմասնակցի նաև իմ պառավը՝ Լևեն ինչ միանգամից կվճռենք: Կարիք չկա գործը յեղկարբարակ ձգձգելու: Դեհ, զալո՛ւ յեք, թե չե:

Գուրգեն և Շուշան.— (Միասին)՝ Կգանք, կգանք:

Ստեփան.— Մնաք բարե: (Գնում ե):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Առաջին գործողության դեկորացիան:

I.

ԴԱՎԻԹԸ ՄԵՆԱԿ

Դ ա վ ի թ . — (Մաքերի մեջ և ընկել): Գնացին
Ստեփանի մոտ: (Հոգոց և հանում): Ամբողջ ըն-
տանիքս դարձել և անաստված... Գնացին
Զվարթի բախտը վորոշեն: Տալու յեն նրան
խելքից պակաս Սուրենին... տալու յեն առանց
հոր որհնության և առանց յեկեղեցում պսա-
կելու: (Թքում և): Թ՛ն, անիծվածներ, փշացած-
ներ, ճամբից դուրս յեկածներ: (Հոգոց և հանում
և իսպաղնքում և: Լռություն): Վերցնում և պատու-
հանից ավետարանը, և մի քանի թերթ շուռ ու մուռ
կարդում և):

Ներս և մանում Յեսթերը:

II.

ԴԱՎԻԹԸ ՅԵՎ ՅԵՍԹԵՐԸ

Յ Ե ս թ Ե ր . — (Սոնարձությամբ բարեում ե) :
Ասածու վողորմությունն ու փրկությունը քեզ,
խալֆա Դավիթ :

Դ ա վ ի թ . — Վողջ և առողջ մնաս, կույս
Յեսթեր :

Յ Ե ս թ Ե ր . — Սուրբ գի՛րք ես կարգում,
շարունակ քո հողու փրկության և յերկնքի թա-
գավորության մասին ես մտածում : Թող Աստ-
ված ընդունելի համարի քո աղոթքները :

Դ ա վ ի թ . — Ի՛նչու եսքան ժամանակ մեզ
մոտ չես յեկել, կույս Յեսթեր :

Յ Ե ս թ Ե ր . — Դե ի՛նչպես գամ, խալֆա Դա-
վիթ, Շուշանդ ենպես ե յերես ցույց տալիս
խնձ, վոր ուզում եմ իսկի չերևալ : Ենպես ե
վրաս նայում գազանի աչքերով, կասես հրես
խնձ կուլ պիտի տա :

Դ ա վ ի թ . — Բա դու նորություն լսել ես :
Նա բայլչևիկ ե գրվել և քրիստոնեյական հավա-
տից դուրս ե յեկել :

Յ Ե ս թ Ե ր . — (Աչքերը յերկինք բարձրացնելով
ձեռքերը միմիանց ե շրմփացնում) : Տեր Աստված,

տեր Քրիստոս, սատանեն նրան ճանապարհից հանել ե. նրա մեջ սատանա յե բուն դրել:

Դատվի թ.— Չվարթիկին ել հետն ե տարել: Յես, յես հիմա վոչ վրքի շունեմ, մեն-մենակ եմ մնացել:

Յես թ եր.— Հոգուդ մեղք մի արա, խալֆա Դատվի թ, դու մենակ չես:

Դատվի թ.— (Տարուբերում ե գլուխը): Մենակ եմ, մենակ:

Յես թ եր.— Հոգուդ մեղք մի արա, ասում եմ, մի բարկացրու Ասածուն:

Դատվի թ.— Բա սում, սում ունեմ:

Յես թ եր.— Ում, սում, մի թե բոլոր հա՛վատացյալները քո ընտանիքի անդամները չեն:

Դատվի թ.— Այո, դրանցով, դրանցով ե, վոր յես մխիթարվում եմ, դրանք են իմ հույսն ու սպավենը:

Յես թ եր.— (Ձեռքերը միմիանց շրժփացնելով): Վսյ, վսյ, վսյ. բա եղպես ել խաղբ ու խայտառակություն կլինի, վոր քեզ ու քո ազնիվ անվանն ե բերում քո եզ անհավատ կլինը:

Դատվի թ.— Եհ, ինչ արած, եզ ել ե ասածու կամքը:

Յես թ եր.— Ճշմարիտ ե ասված, վոր՝ աստանց ասածու կամքի, գլխիցդ իսկի մազ ել չի

ընկնի՞: Յես, խալֆա Դավիթ, եսոր ել չեյի գա-
քեզ մոտ, յեթե կնոջդ, աղիդ ու աղջկանդ հետ
դրսում տեսած չլինեյի: Նրանք ուր եյին գը-
նում, չգիտեմ:

Դավիթ.— Գնում եյին յեղբորս՝ Ստեփա-
նի մոտ: Գուրգենի հետ Ստեփանն ել ե յեկել
քաղաքից: Եդ բոլորն ել ուզում են Զվարթի-
բախտը վորոշել առանց ինձ, ուզում են Զվար-
թին տալ Սուրենին, առանց իմ կամքը հարցը-
նելու և առանց յեկեղեցում պսակելու:

Յես թեք.— (Գուրգեն տարուբերում է) Տես
ինչ ժամանակների հասանք է: Յեվ ինչ բաներ
ասես, վոր չեն պատմում ամբողջ գյուղում Զը-
վարթի և Սուրենի մասին: Բայց դու շատ մի
բարկացիր, խալֆա Դավիթ: Յես քեզ կասեմ թե
ինչ պիտի անես, վոր ամեն բան լավ և քո քե-
ֆովը լինի: Բայց դու ել, ի հարկե, չես խնայի
ինձնից, ես խեղճ վորբիցս քո կոպեկները:

Դավիթ.— Վոչինչ չեմ խնայի, կույս Յես-
թեք, վոչինչ:

Յես թեք.— Բայց պետք ե կատարես են
ամենը, ինչ վոր քեզ ասելու յեմ:

Դավիթ.— Կովս կծախեմ, միայն թե ա-
սածս կանեմ:

Յես թեք.— Վոչինչ: Աստված քեզ ողնու-
թյան կհասնի: Դե լսիր և լավ միտդ պահիր, թե

ինչ պիտի անես: Խնդրիր տերտերին, վոր նա մեռելոցք կատարի Սուրենին, են ել վոչ թե հասարակ մեռելոցք, այլ շատ մեծ, են մտքով, թե իբր նա կենդանի չի և իբր նրա խայտառակ հոգին յերկրի յերեսից կորել ե: Հետո վերցրու մեղքամոմը, թարս տնկիր: Դրանից հետո տեր աստվածը նրան տանջանքի կդատապարտի, որ ուզիչեր հանգիստ չունենալով մոմի պես կհալչի: Բացի գրանից, դու պետք ե յոթ անգամ պատարագ սարքես և նրան անիծես: Յերբ պատարագի ժամանակ սարկավազը կասի՝ թող «անիծվեն մեղավորները», դու քո մտքում յերեք անգամ կասես՝ «Ով մեղավոր Սուրեն, անիծվես և հավիտյանս սատանի բաժին դառնաս»: Իսկ յես տյարվանից կսկսեմ Սուրենի վրա սաղմոս կարդալ, վորպես մեռածի... Յեվ կտեսնես, վոր Սուրենը կսկսի հալչել և ճիճվի նման հետզհետե յերկրի յերեսից կչքանա: Դեհ ես բոլոր ասածներին և շարձարանքին համար ինձ մի բան տուր: Միայն ելի յեմ ասում հա, ասածներս բոլորը կատարես:

Դասվիթ.— Բոլորն ել կկատարեմ: (նրան փող և աալիս), Տեր աստված քո աչքը մեր վրից անպակաս անես:

Յես թեր. — (Վերցնում և փողը և իոնարհաւթյամբ մնաս բարև ասում), Տերը քեզ պահպանի

և փրկի, խալֆա Դավիթ, քո բարեսրտության համար: Իսկ Զվարթին յես մի ուրիշ միջոց ցույց կտամ, վորպեսզի նա իր հոգու համար փրկություն գտնի: Նրան կտամ յոթ տարվա կեսգիշերի ջուր, վորն աստժու անտեսանելի զորությունն ունի իր մեջ:

Դավիթ. — (Ուրախ և զարմացած): Մի՞թե յոթ տարի պահել ես այդ ջուրը, կույս Յեսթեր: Յեսթեր. — Յե՛վ ես ել ինչպես եմ պահել մարտը, մաքուր, կասես տիրամոր արտասունքը լինի: Ութերորդ տարին ե, վոր շշի մեջ ե: Ինչքան խնդրողներ են յեղել, վո՛շ վո՛քի չեմ տվել: Եդ ջուրը, խալֆա Դավիթ, ամեն մարդու վշտից, փորձանքներից և նեղությունից ազատում ե: Եդ ջրից տուր թող Զվարթը խմի, կը տեսնես, վոր նա կսկսի Սուրենին ատել և զըզվել նրանից:

Դավիթ. — Յէ՛րբ պետք ե տաս ինձ եդ ջուրը:

Յեսթեր. — Հենց եսոր ել կտամ: Կգաս, կստանաս, քեզ վոչինչ չեմ խնայի: (Իբր թե ըսթափվելով): Պա հո՛, շատ նստեցի: Գնամ, թե չե շուտով կգա քո կախարդը: Դե՛հ փառաբանենք յերկնային աստժուն ու Քրիստոսին, (Դավիթը կանգնելով նրա կողքին, միասին յերգում են):

Ներս և մանուկ Շուշանը մի բոպե շվարած ե մնում: Յերգը դադարում ե:

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՇՈՒՇԱՆԸ

Շ ու շ ա ն . — (Իսկույն խելքի դալով և ծիծաղով) : Յես ել եմ ձեզ հետ ուզում աստծուն սխառքանել :

Դ ա վ ի թ . — Սրբապիղծ, Աստված կպատժի :

Յ ե ս թ ե ր . — Վողջ, առողջ ես, Շուշան, բարեբար մայրիկ, ինչպէս ես : Փառք աստծու լավ ես, լավ :

Շ ու շ ա ն . — Լավ լինելուս համար յես աստծուն փառք չեմ տալիս :

Յ ե ս թ ե ր . — Քանի՞ քանի անգամ եմ քեզ մտա յեկել, դու տանը չես յեղել :

Շ ու շ ա ն . — (Զարմացած) : Մի՞թե՞ դու չգիտեցիր վոր յես տանը չեմ :

Յ ե ս թ ե ր . — Վարտե՞ղից կարող եյի իմանալ, աստված քեզ հետ :

Շ ու շ ա ն . — Ի՞նչպէս թե վարտեղից, չե՞ վոր դու փողոցում ինձ պատահեցիր :

Յ ե ս թ ե ր . — Մի՞թե, մայր Շուշան, եդ դու եյիր : Յես քեզ չեմ ճանաչել ուրեմն կհարբստանաս :

Շ ու շ ա ն . — (Կատաղած) : Դ ե կորի՛, յեկեղեցու մոկ . ինչպէս ես առանց կարծելու խաբում : Դու վոչ թե ինձ մտա ես յեկել (ցույց և

տալիս Դավիթին), այլ էն փետի կտորի մօտ, վոր նրան հիմարացնես ու թալանես:

Դավիթ.—Շուշան, լեզուդ քեզ պահիր:

Յեսսթեր.—Ի՞նչ է պատահել քեզ մայր

Շուշան. չլինի քեզ շշմեցնող դեղ են տվել:

Շուշան. (Ձեռքը գցում է անթրոցին) Կորիր, անիծված հոգի. կորիր զգվելի «գյազագյան»: Ել ճերքեք իմ շեմքը վտաք չգնես:

Յեսսթեր.— (Սաշակն քելով վրայի պրծնում զեպի գուռը), Տեր, դու փրկես, ազատես: (Իսկույն թագնվում է դռան քամակը):

Դավիթ.—Կկորչես, Շուշան, կկորչես դու մեղքերի ծոփում, ինչպես ճանճը մեղրի մեջ է թաղվում:

Շուշան.—Սուտ սուրբ:

III.

ԴԱՎԻԹ, ՇՈՒՇԱՆ, ԳՈՒՐԳԵՆ, ԶՎԱՐԹ ՅԵՎ ՍՏԵՓԱՆ

Ստեփան.—Բարև, Դավիթ յեղբայր:

Դավիթ.—Աստծո՛ւ բարևը քեզ Ստեփան:

Ստեփան.—Հը՛, ուրեմն ի՞նչ էս ասում,

Դավիթ, չես համաձայնվում ելի, վոր Զվարթին Սուրենին տանք:

Զվարթ.—(Ընկնում է հոր վզովը), Հայրիկ, ախրեղի հայրիկ, յեթե դու մի փոքր ինձ սիրում

ես, արգելք մի յեղիւր իմ իսկական բախտին սո՛ւր քո համաձայնութՅունը:

Դ ա վ ի թ. — (Վեր ե կենում և յերեսը խաչակնքում ե), Թող աստված չանի, վոր յես եք խայտառակութՅունը տեսնելու որին արժանանա՞մ: Յես ի՛նչպես հոգուս մեղք անեմ և համաձայնվեմ, վոր իմ հարազատ աղջիկը խորտակւի...:

Գ ու ը գ ե ն. — Չգիտեմ ինչո՞ւ, հայրիկ, Չըվարթի ամուսնանալը Սուրենի հետ համարում ես աղջկանդ կյանքի խորտակում:

Դ ա վ ի թ. — Ի՛նչպես, մի՞թե անհավատին, խելքից պակասին, քրիստոնեական կրոնը վտանատակ տվողին առնելը խայտառակութՅուն և խորտակում չե՞: Մի՞թե առանց յեկեղեցու և սուրբ որհնության ամուսնանալը կյանքի խորտակում չե՞:

Ս տ ե փ ա ն. — Մի փոքր սպասիր, ա՛յ խելքի կարոտ, մի լավ լսիր, թե ինչ ե պետք և հետո...

Դ ա վ ի թ. — (Ընդհատում ե) Բոլորովին լսել չեմ ուզում: Ինձ ճանապարհից մի հանեք, անհավատներ, մի քրքրեք իմ հոգին:

Շ ու շ ա ն. — (Դառնալով Ստեփանին ու տղին) Ի՛նչ բանի յետևից եք ընկել և ինչի մասին եք խոսում նրա հետ: Նա շատ ե մտածում իբր աղջկա մասին. նա Յեսթերի հետ միասին ար-

քայության պատրաստություն ե տեսնում յերկընքում:

Ստեփան.— (Ծիծաղում ե) Ե՛հ, հարս, ի՛նչ ասեմ, յեթե ես յերկրի վրա դրախտ չզըտնես, ենտեղ վոչինչ չես գտնի:

Շ ու շ ա ն.— Ներս մտնեմ տուն, տեսնեմ Յեսթերի հետ միասին յերգում ու աստծուն են փառաբանում: Ուզեցի մի նրա կողերը փետով կակղացնել, անփոս շուտ զնաց:

Գ ու ը ղ ե ն.— (Դառնալով Զվարթին) Ե՛հ ինչ արած, քույրս, հայրիկը, ինչպես տեսնում եսք, համաձայն չե, վոր դու Սուրենին առնես:

Ստեփան.— Յեզան պես կողը հաստացըրել ե:

Շ ու շ ա ն.— Դե ջանդամը թե համաձայն չե. առանց նրան ել գործը զլուխ կգա: Տեսնում ես ինչ տեսակ մարդ ե:

Դ ա վ ի թ.— (Բոլորի վրա հայացք ձգելով) Յես ասում եմ, վոր եղպիսի բան չլինի:

Շ ու շ ա ն.— Բա չե՞, մի քեզանից վախեցանք և լսեցինք: Հիմա առաջվա ժամանակները չի: Տեղումդ նստիր:

Ստեփան.— (Վեր ե կենում) Դե՛հ, յեղբայրս, կուզես համաձայնվիր, կուզես չե, կիրա-

կի որն արի մեր տուն՝ Զվարթի հարսանիքին։
Տես թե ինչպիսի ուրախություն ենք անելու.
հարսանիք, և են ել ինչպիսի հարսանիք։

Դ ա վ ի թ. — (Համբերությունից դուրս և գա-
լիս և բուռնցքով սեղանին և խփում)։ Ասում եմ
եղպես բան չլինի, լսում եք, բոլորիդ կանիծեմ,
խելքի յեկեք՝ քանի դեռ ուշ չե։

Զ վ ա ը թ. — Հայրիկ (Ուզում և իրեն հոր
վրա գցել, բայց մայրը նրա թևից բռնում և, չի թող-
նում)։

Դ ա վ ի թ. — Կորեք եստեղից, անիծյալ հո-
գիններ, կորեք, վոր բոլորովին իմ աչքերը ձեզ
չտեսնեն։

Ս տ ե փ ա ն. — Դնանք, գնանք, հարս, գնանք
բոլորդ ինձ մտա։ Յես տեսնում եմ, վոր մենք
եստեղ գործ չունենք անելու. տեսնում եք, նա
չափ ու սահմանից բոլորովին դուրս և յեկել
(գնում և դեպի դուռ)։

Շ ու շ ա ն. — (Կամաց-կամաց շալը վերցնելով)
Բոլորովին կատաղեց։

Դ ա վ ի թ. — Կորեք անագնիվներ, կորեք
խորտակված արարածներ։

Ս տ ե փ ա ն. — (Կամացուկ ծիծաղում և)։ Են-
պես ե փրփրել, դառել մի մեծ փոթորիկ (ա-
ռաջինն ինքն և դուրս գնում, նրա յետից՝ Շուշանը,

ապա Գուրգենը և վերջը Զվարթը. վերջինը արտա-
սուսքները աչքերին շուռ ե գալիս և նայում և հորը):

Քա վի ի թ. — (Բաց դանից): Աստծու և Քրիս-
տոսի անուանով անիծյալ լինեք բոլորդ:

Հեկեկալով, ծնկների վրա ընկնում և գե-

տի

Վ Ա Ր Ա Կ Ո Ւ Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

ՏԵՐ-ՂԵՎՈՆՈՅԻ ՏԱՆ ԱՆԵՆՅԱԿԻՐ, ՎՈՐԸ յԵՎ նաւա-
րան Ե յԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՐԱՆ, հանդիսակայաներից
հաււած՝ բեմի ձախ պատում կա մի դուռ,
վորը տանում Ե դեպի ննջարանը, իսկ աջ կող-
մում մի դուռ՝ դեպի խօհանոցը, վոր միաժա-
մանակ նախասենյակի դեր Ե կատարում: Մա-
րանը գուլպա յԵ գործում: ՅԵՐԵԿՈՅԻԱՆ ղԵՄ Ե:

I.

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴ ՅԵՎ ՄԱՐԱՆ

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴ. — (Ննջարանից)՝ Մարան
(լուռ թյուն), Ա՛յ Մարան:

ՄԱՐԱՆ. — (Բարկացած)՝ Ի՞նչ ես ասում ե՞ս

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴ. — Գլուխս Ե տրաքում, Մա-
րան, գլուխս: (Գուրս Ե գալիս ննջարանից զզզված
մազերով, տրորված մորուքով, փքված դեմքով: Հա-
զել Ե մի հին ֆարաջա. մեկ վոտին կիսակոշիկ, մյուս-
սին՝ գուլպա):

ՄԱՐԱՆ. — Գլուխդ տրաքում Ե, բայց
յես եզ տրաքոցի ձենը չեմ լսում:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴ. — Ո՞ք, հոգիս բերանս յե-
կավ, յես մեռա. մի տես, տես, եստեղ-ե՛նտեղ
շշերի մեջ մի եսքան (ցույց Ե տալիս ձկուրթը)

գուցե արաղից քանից ճարես ուշքս գնում ե
 (տնքտնքում ու սֆ սֆ ե անում):

Մարան. — (Նայում ե ամուսնուն): Ի՞նչ
 անամ թի աչքեր ունես: Մի քեզ նայիր ե, քո
 եղ անճոռնի պատկերին: (Շարունակում ե
 դարձյալ իր գուլպան գործել): Այ քեզ աստծու
 պատիժ:

Տեր-Ղևոնդ. — Վոչինչ, Մարան, վոչինչ,
 միմիայն աստված ե անմեղ: Դե մի վեր կաց,
 վեր կաց գտիր, մեղավորիս սիրտը հովացրու,
 մի տանջիր ինձ:

Մարան. — Ասա տեսնեմ, վո՞րտեղից յես
 քեզ համար գինի կամ արաղ ճարեմ, մեռնի
 հարբեցող պատկերդ, եստեղ գինետուն ե, ի՞նչ ե:

Տեր-Ղևոնդ. — Մի հայհոյիր լավ. մի քիչ
 համբերիր, կփուշտամ ամեն բան լավ կգնա:

Մարան. — Ոհանը յեկել խնդրում եր,
 վոր գնաս իր յերեխին կնքես. եղ դրությամբ
 վարսդ ես կնունք կատարել:

Տեր-Ղևոնդ. — Դե ջհանդամը նա իր կը-
 նունքով: Ի՞նչ յերեխի կնքելու մասին ես խո-
 աում, հոգիս դուրս յեկավ, հոգիս, սոսնճ:

Ներս ե մտնում տիրացուն:

II.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՏԻՐԱՑՈՒՆ

Տիրացու.— Հը, ի՞նչ ե պատահել, տեր հայր, եդ ի՞նչ ցավեր ես քաշում:

Տեր-Ղևոնդ.— Տանջվում եմ, տանջվում շան պես:

Տիրացու.— Տեսնում եմ, տեսնում, շատ վատ ես տանջվում, դե վոչի՛նչ, կանցնի (ցույց ե տալիս գրպանից արաղի շի գլուխը): Ահա մեր փրկիչը, ամեն հիվանդությունից ու փորձանքից ազատողը (Ծիծաղում ե), Բա դու, տեր հայր, ինձ չե՞ս դովում:

Տեր-Ղևոնդ.— (Ընկնում ե տիրացուի վրա)։ Ո՛վ դու բարերար, յես առանց քեզ կորած եմ, կորած:

Տիրացու.— Չես սխալվում, տեր հայր, (շիշը սեղանի վրա յե դնում): Դե մի տես ե՞, տեր հայր, կասես իսկական «Արարատի» կանյակ լինի: (Ծիծաղում ե, ապա շիշը բռնելով ձեռքը, դառնում ե շիին ասելով): Եղպես ե՞, մի ցրիվ տուլք մեր դարդերը, ով դու մեր ցավերի դարման:

Մարան.— Բա ամոթ չե՞, տիրացու, վոք տերտերին խմեցնելու յես յեկել:

Տիրացու.— Վոչ թե յեկել եմ նրան խը-

մեցնելու, այլ մի բարի գործ կատարելու—հիվանդ բժշկելու: (Ծիծաղում ե դառնալով Տեր-Ղեվոնդին): Դե, տեր հայր, արշինանոցը հան մի տեսնենք:

Տեր-Ղևոնդ. — (Իսկույն հանում ե պահարանից բաժակը և դնելով սեղանի վրա՝ ձեռքերը իրար ե շփում): Ոխայ:

Մարան.—Տիրացու, տես, մի բաժակից ավելի չտաս: Տես թե ինչի յե նման. վոչ արջ ե վոչ կապիկ: (Ծիծաղում ե): Մարդու պատկեր չկա վրան:

Տիրացու.—Տերտեր, տեսնում ես, տիրուհին ինչ ե ասում: Իբր թե դու բոլոր կենդանիներին ել նման ես, դրա համար ել մի բաժակից ավելի քեզ չի կարելի տալ (ծիծաղում ե):

Տեր-Ղևոնդ.—Լցնում ես շուտ, լից, թե չե հանկարծամահ կլինեմ:

Տիրացու.—Կմեռնես, մի ուրիշ տերտերի կուղարկեն քո տեղ. իսկ տիրուհին մի վարդապետի կգնա մարդի:

Մարան.—(Յերկար ծիծաղում ե): Վայ տիրացու տիրացու, ինչ տեսակ անթույլատրելի խոսքեր ես ասում:

Տիրացու.—(Լցնում ե բաժակը) Բայց ասում են, վոր մեր վարդապետը վաղուց ամուսնացած ե:

Տ ե ր - Ղ և ո ն դ . — (Ազահորեն խմում է և ձեռքը կրծքի վրա դնում)։ Կասես Քրիստոսը բորիկ վոաներով սրտիս վրայով անցավ։ Մի հատ միայն, մի հատ, տիրուհի, դրանից ավելի ել չեմ ուզի։

Տ ի ր ա ց ու . — Ի՞նչ արած, ստիպված եմ մի հատ լցնել։ Դեհ, թըջիր կոկորդդ, տեր հայր, (բաժակները լցնում է)։

Մ ա ը ա ն . — (Նայում ամուսնուն և յերեսը շուռ և տալիս)։ Ֆաստնդ կտրվի, ֆաստնդ։

Տ ի ր ա ց ու . — (Տեր-Ղևոնդին)։ Դեհ, տեր հայր հաղորդվիր, վոր ցավից չոռից ազատվես։

Տ ե ր - Ղ և ո ն դ . — Սանտարամենտը կգնաս։

Տ ի ր ա ց ու . — Չե, ուր վոր գնամ դու ինձանից չես բաժանվի, դու ել կգաս։ Դեհ, դե հիմի հեռացիր, մնացածն ել ինձ ու տիրուհուն։ (Տիրուհուն)։ Դե, խմի տեսնենք (խմում են)։

Տ ե ր - Ղ և ո ն դ . — (Նախանձով նրանց ե նայում) **Ա** ի սատանեն ձեզ տանի։

Ներս և մանուկ Ռհանը և կանգ և առնում դռան մոտ։

III.

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴԸ, ՄԱՐԱՆԸ, ՏԻՐԱՑՈՒՆ ՅԵՎ ՈՂԱՆԸ

Տ Ե Ր-Ղ Ե Ո Ն Ղ.—(Մոտենում ե ոհանին), Հ՞ը,
ինչ կա, դու ել գլուխ ես տանում: (Որհնում ե):
Հանուն հոր և վորդվո և հոգվոյն արբո:

Ո հ ա ն.—Այո, աստված ինձ վորդի տվեց:

Տ Ի Ր ա ց ու.—(Հոհում ե), Լավ ես արժա-
նացել աստծու վորորմությանը:

Տ Ե Ր-Ղ Ե Ո Ն Ղ.—Տղա՛ս յե, թե՛ աղջիկ:

Ո հ ա ն.—(Վիրավորվածի պես ծիծաղում ե),
Գլուխ թաղածն աղջիկ ե:

Տ Ե Ր-Ղ Ե Ո Ն Ղ.—Մեջքդ չկոտրվի հա, ին-
չո՛ւ տղա չե, աղջիկ ե:

Ո հ ա ն.—Եղպես յեղավ ելի, ի՞նչ արած:
(Հանում ե գրպանից արագով լիքը շիշը):

Տ Ի Ր ա ց ու.—(Մոտենում ե ոհանին) Ե՞դ ինչ
ե, դրանով հագիվ իմ ու տեր հոր աչքերը
թըջենք: Ե՛հ, ախպեր պնդածեո ես դառել, ափ-
սոսել ես մի մեծ շիշ բերել:

IV.

Տ Ե Ր-Ղ Ե Ո Ն Ղ.—Դե՛հ, վոչինչ, տիրացու վո-
չինչ: (Վերցնում ե շիշը): Յեթե տղա ծնված լի-
նեք մեծ շշով կբերեր:

Ոհան.—Իսկի յերկուսն ել չեյի խնայի,
տեր հայր:

Տեր-Ղևոնդ.—Իսկ աղջկա համար ես
քանը բավական ե:

Ոհան.—(Դառնալով տիրացուին) Տեսնում
ես դու ինչ տեսակն ես, խալֆա տիրացու, քո
ասելով քիչ ե, բայց տեր հայրը զոհ ե բերա-
ծիցս, նա խղճում ե մեզ քրիստոնյաներին:

Տիրացու.—Բա չե, աղվեսն ել ե աքլո-
րին խղճում, բայց ենպես ե նրան լափում, վոր
մի վոսկորի կտոր և մի բմբուլ ել չի թողնում:

Ոհան.—(Դիմում ե Տեր-Ղևոնդին) Բա յե՞րբ
ես հրամայում, վոր յերեխեն բերենք:

Տիրացու.—Դե ել ի՞նչ բերես վոր. ա-
նունը Սուսան դիր, վերջացավ գնաց:

Ոհան.—Եղպես յես կարծում եմ չի կա-
րելի. չե՞ վոր պեաք ե կնքել:

Տիրացու.—Տանդ ջուր չկա, ինչ ե. յե-
թե չկա, տար նրան ուղղակի գետը. փառք աստ-
ծու ձմեռ ել չե, վոր մրսի:

Տեր-Ղևոնդ.—(Լուրջ ձևացած) Մի մեղան-
չեր, տիրացու:

Տիրացու.—(Հնազանդվածի պես) Լուում
եմ, տեր հայր, լուում եմ:

Տեր-Ղևոնդ.—(Դառնալով Ռհանին) Ի՞նչ
անունն ես ուզում տանք յերեխին:

Ռհան.—Կուգեյի իբ տատի Սառայի ա-
նունը տալ նրան:

Տեր-Ղևոնդ.—Իսկ ս՛վ ե լինելու քա՛վորը՞

Ռհան.—Յերեխաներիս քա՛վորը՝ Սաքոն:

Տեր-Ղևոնդ.—Տիրացու, գե գրի՛ր եգ
անունները:

Տիրացու.—Կարելի յե: (Մտտենում ե սե-
ղանին, հանում ե գիրքը և գրում):

Տեր-Ղևոնդ.—(Ռհանին) Վորպեսզի կը-
նունքի ծախսի տակ չզցենք քեզ, մենք կկա-
տարենք բացակա կնունք: Մոմի փողը տուր, չը
մոռանաս տիրուհու համար ել մի աքլոր բերել՝

Ռհան.—(Գրպանից փող ե հանում և տալիս
ե Տեր-Ղևոնդին): Ես ե յեղած-չեղածս, տերտեր,
ել չունեմ:

Տեր-Ղևոնդ.—Դե լավ, վոչինչ: Ուրեմն
ինչ վոր հարկավոր եր, արեցինք. անունն ել
դրեցինք, գրքի մեջ ել գրեցինք. բայց չմոռա-
նաս աքլորը հա:

Ռհան.—Եզուց կրերեմ: (Մնաս բարև ե ա-
սում) Դեհ, մնաք բարով:

Տեր-Ղևոնդ.—Տեր ընդ քեզ. (մտտենում ե
սեղանին, Ռհանը գնում ե):

Տիրացու. — (Հոհում ե) Շատ լավ «կըն-
քեցինք» յերեխին չե՞: (Վերցնելով Տեր-Ղևոնդի մո-
տից բերած արագի շիշն ու բաժակները լցնում ե:
Դե հիմի արի մենք «կնքվենք», թե չե՝ տե՛ս
տիրուհին ուզում ե քնել: (Դառնալով տիրուհուն)
Դեհ, տիրուհի, մի շրխկացնենք, տենենք:

Մարան. — (Բաժակը շրխկացնում ե): Այ
դուք մեղքի տուգանքներ, ձեզ իսկի դժոխքումս
ել տեղ չի լինի: (Միասին խմում են):

Տեր-Ղևոնդ. — (Նայում ե գրքի մեջ) Գրե-
ցի՛ր յերեխի անունը:

Տիրացու. — Ի՞նչպես, չեխզբզեցի: (Դըմբ-
դըմբացնում ե սեղանին ե յերզում ե):

Տերտերն ուներ մի լավ ձի,

Տերտերին տվեց քացի.

Տիրուհին վոր իմացավ,

Նստեց կսկծից լացավ:

Ներս ե մտնում Յեսթերը

V.

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴԸ, ՏԻՐԱՅՈՒՆ ՅԵՎ ՅԵՍԹԵՐԸ

Յեսթեր. — Որհնյա ի տեր:

Տեր-Ղևոնդ. — Աստված որհնեսցե:

(Ներս ե մտնում Դավիթը և աղոթում ե):

VI.

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴԸ, ՏԻՐԱՅՈՒՆ, ՅԵՍԹԵՐԸ և ԴԱՎԻԹԸ

ՏԵՐ-ՂԵՈՆԴ. — (Մոտենում ե Դավթին և որհնում նրան). Լսել եմ, Դավիթ, լսել եմ քո զժբախտության մասին: Ցավում եմ, շատ եմ ցավում:

Դավիթ. — Աստված բարկացել ե վրաս, ինձ պատժել ե: Ամբողջ ընտանիքս — կինս, տղաս, աղջիկս բոլորն ել աստծու ու քրիստոսի հավատից դուրս են յեկել: Բա դա լաված բանն ե: Իսկ աղջիկս առանց հոր որհնության, առանց պսակի...

ՏԵՐ-ՂԵՈՆԴ. — Այո, ամուսնանում ե բայլ-շևիկ Սուրբնի հետ... Յես ամեն ինչ գիտեմ: Յեսթերն ինձ բոլորն ել պատմել ե:

ՅԵՍԹԵՐ. — (Ավելի յ մոտ գալիս). Այո, տեր հայր, աստված ուզում ե Դավթին մի լավ փորձել:

ՏԵՐ-ՂԵՈՆԴ. — Յե՛վ իսկապես դա մի փորձությունն ե. դե վոչինչ, աստված պատժել ե, աստված ել կխնայի: Կաղոթենք, ամեն ինչ կանցնի, քո թշնամիներն ել ամոթով կմնան: Միայն թե մի հուսահատվիր:

Դավիթ. — (Ծնկների վրա յ ընկնում). Թե դու ինձ փրկես տեր հայր, քո աղոթքն ավելի

շուտ տեղ կհասնի, դու սուրբ բեմումն ես ծառայում:

Տ եր-Ղ, և ո՛ն դ. — (Բարձրացնում ե Դավթին): Վաղը ժամերգությունից հետո մաղթանք կկատարենք: Մուրենին հոգեհանգիստ կատարելու մասին ել ե ինձ ասել կույս Յեսթերը, եդ ել կկատարենք:

Յ ե ս թ եր. — (Վրա բերելով), Նրա հոգին քոլորովին կկորչի և սատանի բաժին կլինի:

Տ ի ր ա ց ու. — (Դավթին): Բայց գիտե՞ս, Դավիթ, առածն ասում ե՛՛ Քինչքան տաս, ենքան ել կերգենք:

Դ ա վ ի թ. — Ինչ վոր ուզեք, չեմ խնայի: (Հանում ե գրպանից և տերտերին ե տալիս մի քանի ուրբի):

Տ ի ր ա ց ու. — Են տեսակ պատարագ անենք, վոր սատանաները հանգիստ չունենան:

Տ եր-Ղ, և ո՛ն դ. — Հենց եդ եր ասածդ, տիրացու:

Տ ի ր ա ց ու. — Յե՛վ վոչ թե հասարակ պատարագ եմ ասում, այլ մե՛ծ, շատ մե՛ծ, վոր վերևից մինչև սանտարամետ սարսափահար լինեն չարքերը: Չե՛ր կարելի, խալֆա Դավիթ, մեզ մի թեթև շիշ արագ պատրաստելիք, վոր պատարագից առաջ բողազներս թըջելինք:

Դ ա վ ի թ . — Կաշխատեմ: (Մնաս բարե և ա-
նում), ներեք մեղավորիս:

Յ ե ս թ ե ր . — Աստված թողութուն անի
մեղքերիս: (Դավիթը գնում է):

Տ ե ր - Ղ և ո ն դ . — (Յեսթերին տալիս է մեկ
սուրի): Վերցրու, Յեսթեր, ես ել քեզ:

Տ ի ր ա ց ո ւ . — Մեր կատարած աշխատանքի
փողն է դա: (Դառնալով Տեր-Ղևոնդին), Թեև քա-
նի գնում, ենքան պակասում է աշխարհում
հիմարների թիվը, բայց, տեր հայր, յեղածներն
եւ ինձ ու քեզ հերիք են: (Ծիծաղում են):

Վ . Ա . Բ . Ս . Գ . Ո . Ի . Յ . Բ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Առաջին գործողության դեկորացիան: Կեսուրից հետո յե: Դավիթը պառկած է թախսի վրա: Ընդունելու է մեկուսի Համբուն:

I.

ԴԱՎԻԹ ՅԵՎ ՀԱՄԲՈՆ

Համբուն.— Բարեկ, խալֆա Դավիթ, ինչո՞ւ յես պառկել: Թե՞ մենակ տխուր ես զգում քեզ:

Դավիթ.— (Վեր է կենում): Համ մենակ եմ, համ ել մի տեսակ վատ եմ զգում ինձ: Մեկ ել միտք եմ անում թե ես ինչ պատահեց մեր կրոնին:

Համբուն.— Ի՞նչ է պատահել... փթել է եդ կրոնը, մեկ ել դե այդ մասին, խալֆա Դավիթ, յես ի՞նչ կարող եմ ասել. եդ տերտերի ու տիրացուի բանն է, նրանք կարող են բացատրել:

Դավիթ.— Եհ չե, հերիք ե նրանց հետ ինչքան խոսել եմ (Հոգոց է հանում):

Համբուն.— Նրանք թեև հարբեցող, հիմար, կնամուլ մարդիկ են, բայց ելի հասկանում են: Մանավանդ տիրացուն ամեն բան զիտե: Նրան մի յերկու յերեք բաժակ արաղ տուր՝ ամեն ինչ

քեզ կպատմե. և կպատմե թե կաշաղակը գյուղում ո՞ւմ տան կտրանն ե կանգնել և սոխակի պես յերգել:

Դ ա վ ի թ. — (Տխուր զուխը տարուբերում է) Յես նրանց այլևս չեմ հավատում:

Հ ա մ բ ո. — Տիրացուն հենց ուղղակի հարձակում ե կատարում: Մերն եսպես, — ասում ե մեռելին ել, կենդանի մարդուն ել պետք ե քերթել: Զուր չե, ասում ե, — վոր մարդիկ առած են դարձրել, թե՛ «վորոնիր ավազակին բանտում, իսկ խաբեբաներին տերտերները մեջ»... Ինչ ասես ուզում ե և հեռն ել ծիծաղում ե:

Դ ա վ ի թ. — (Հոգոց ե հանում): Ի՞նչ ժամանակի հասանք է:

Հ ա մ բ ո. — Բա դու գիտե՞ս, խալֆա Դավիթ, յես Զվարթի և Սուրենի մոտ եյի, և ենտեղից ուղղակի քեզ մոտ յեկա:

Դ ա վ ի թ. — (Կենդանություն ստանալով) Ի՞նչ պես են նրանք:

Հ ա մ բ ո. — Մարդու համար հոգի յեն տալիս. ամեն բան ունեն, ինձ մի լավ պատվեցին, ինձ գառան միս ու թեյ տվեցին:

Դ ա վ ի թ. — Դեհ, փառք ասածու: Յերեք շաբաթ ե անցել նրանց ամուսնությունից, յես մինչև հիմա նրանց մասին վոչինչ չեյի լսել:

Լավ ե, վոր դու ենտեղից ես գալիս, ինձ ուրախացրիր:

Համբո.— Սուրենը, գլուխ եմ հան, այ քեզ ընկեր անաստված: Զվարթդ նրան առնելով իսկական բախաավորվեց: Դու գուր տեղն եյիր հակառակում, շատ գուր. գուր նրանց հարսանիքին չգնացիր, հիմարությունն եր արածդ:

Դավիթ.— Ինչ վոր անցավ, անցավ Համբո, ել յետ չի բերվի: Յես հիմարացա, բոլորովին հիմարացա:

Համբո.— (Վեր ե կենում) Դեհ մնաս բարով: Գնամ, զանգերը տալու ժամանակն ե: Դու ինչու ես քանի ժամանակները յեկեղեցի չես գալիս:

Դավիթ.— Ինչ պատասխանեմ եդ հարցիդ, չեմ հասկանում, Համբո: Դե մի բան խախտվել ե մեջս ելի...

Համբո.— Ը՛հր՛:

Դավիթ.— (Հուսահատական շարժումներով) Ել չեմ կարող:

Համբո.— (Գնում ե ե դռան մտտ հանդիպում ե Յեսթերին) Առ քեզ, եդ ել նա: Լավ բան չի լինի: (Գնում ե):

II.

ԴԱՎԻԹ՝ ՅԵՎ, ՅԵՍԹԵՐ

ՅԵՍԹԵՐ. — (Աղոթում, հետո ել բարևում և, Տերը քեզ վողորմի և պահապան լինի, խալֆա Դավիթ: (Դավիթը նստում և թախտի վրա, առանց բարևն առնելու): Նորութուն լսել ես, փեսիդ ևսոք տուավոտ են ողակից հանել: Ամբողջ գիշեր կախված եր: Աստված նրան պատժեց, մեր աղոթքները դուր չանցան: (Դավիթը շարունակում և լուսթյունը, աչքերը շացնելով): Ի՞նչ և պատահել քեզ, խալֆա Դավիթ, հո կախարդված չե՞ս, ի սերը Քրիստոսի: Չե՞ս հավատում: Ես բուպեյիս Ծոզոն իմ մոտ եր: Նա ասում եր, վոր տեսել ե, թե ինչպես են նրան ողակից դուրս բերել:

Դավիթ. — (Յերեսը շուռ տալով և կամացուկ) Ի՞նչի յես յեկել:

ՅԵՍԹԵՐ. — Յեկա, վոր միասին աղոթենք, պատճուն փառաբանենք մեր յերգերով:

Դավիթ. — (Նույնպես նրա վրա չնայելով) Ել ինչո՞ւ:

ՅԵՍԹԵՐ. — Ինչ ե՞ պատահել քեզ, խալֆա Դավիթ, տերը քեզի պահի և պահպանի: Միտքդ փոխել ես, ի՞նչ ե:

Դ ա վ ի թ . — (Խստորեն) Ի՞նչու յեկար, հարցեմ տալիս: Մի ստիր, ճիշտ ասա:

Յ ե ս թ ե թ . — Չեմ ստում, յեկել եմ քեզանից մի քսան հատ ձու խնդրելու, հավերս բուրրովին ձվից կտրվել են:

Դ ա վ ի թ . — (Դարձյալ խստորեն և կամացուկ առանց վրան նայելու): Այլուքիս ամբողջ ամբարը գատարկեց, մեշոկներին ամբողջ ցորենը քաշեց, հիմի յել ձվի յե յեկել: Յեսթեր, դնա ել իմ յերեսը չգաս: Ինչքան աղոթեցինք ու յերգեցինք, ենքանն ել բովական ե: (Բարձրացնում է ձայնը) Յեա հիմի յեմ հասկացել, վոր առաջին կուպաշոր, և կողոպտիչը դու յես և տերտերը:

Յ ե ս թ ե թ . — Իս՞ու Քրիստոս, Իս՞ու Քրիստոս... չլինի թե իր անխիղճ Շուշանից ե վարակվել:

Դ ա վ ի թ . — Գնա, քանի չափ ու սահմանից չեմ դուրս յեկել հա:

Յ ե ս թ ե թ . — (Յեա ու յես և գնում նրանից) Տեր աստված (ցույց է տալիս մատով) Մի նայիր, թե քանխոն են գալիս վրեդ: Չորս կողմից դըրջապատել են, և յերկաթե ձանկերով բռնել են, ատամները բաց են արել, լեզուները հանել, ծիծաղում և ուրախանում են: Աղոթիր, խալֆա Դավիթ, աղոթիր: (Մտանում և աղոթում է Գաճ-

թին), Աստծու և Քրիստոսի անուշնով անիծում
եւ ձեր պիղծ զորությունը, մի գայթակղեցրեք
աստծու ծառայ, խալիֆա Դավիթին:

Դավիթ. — (Լուս կերպով, բայց խկույն բը-
նում և նրա թերից և տանում և դեպի դուռը):

Յեսթեր. — Խելքի արի, խալիֆա Դավիթ,
հոգուցդ ձեռք մի վերցրու:

Դավիթ. — (Յեսթերին զոնից հանում և, խ-
կույն դառնալով սեղանի վրայի ավետարանը գետին
պցելով ընկնում և բարձի վրա և հեկեկում և: Հեկեկո-
ցը աստիճանարար դադարում և:

Շուշան զգուշությամբ ներս և մտնում:

III.

ԴԱՎԻԹ ՅԵՎ ՇՈՒՇԱՆ

Շուշան. — Ինչպե՞ս ես, Դավիթ:

Դավիթ. — (Վեր և թռչում տեղից զարմանալով
Շուշանին տեսնելուց, բայց խկույն և յեթ խելքի գա-
լով ամօթահար յերեսը շուռ և տալիս) Բարով յե-
կար, Շուշան, հը՞ ենտե՞ղ ինչպե՞ս ե, ի՞նչ կա:

Շուշան. — Յեկել եմ քեզ մնաս բարով
ասելու: Ե՛հ, ինչքան շի՛նի քսան և վեց տարի
միասին ապրել ենք: Միասին յերեխանիք ենք
մեծացրել, մենք ել, ե՛հ, վատ չենք ապրել, պա-
կաս աշխատող չես յեղել, ինձ ել վատ չես պա-
հել:

Դ ա վ ի թ . — Շ ու շ ա ն . . .

Շ ու շ ա ն . — Հ ի մ ի Գ ու ը զ ե ն ը , Ս տ ե փ ա ն ը և
Զ վ ա ը թ ն ու ի ը ամ ու ս ի ն ն ե ի կ զ ա ն ե ս տ ե զ : Ա ն -
թ ա ը թ ն ա յ ի ը Վ ը ը ր ա ն) : Ի ն չ ու լ յ ե ս ե զ ա կ ե ս ք ա ը ա -
կ ե ի , հ ո չ ե ս հ ի վ ա ն թ ա ց ե ի :

Դ ա վ ի թ . — Ձ ե , վ ո չ ի ն չ : (Հ ա մ ա ը ձ ա կ կ ե ը -
ս յ ո Վ) Ե ն ա ե զ ի ն չ կ ա . . . Զ վ ա ը թ ն ի ն չ ա կ ե ս ե :

Շ ու շ ա ն . — Զ վ ա ը թ ը . . . լ ա Վ մ ա ը դ ու ն ի ,
ի ն չ ու չ ա ի տ ի չ ա պ ը ի : Հ ի չ ու մ ե ս , թ ե յ ե ս ու
դ ու ա ո ա ջ ի ն չ ա կ ե ս ե յ ի ն ք ա պ ը ու մ , ք ա ն ը ան ք
ի ն չ ք ա ն լ ա Վ ե ն : Զ վ ա ը թ ի ն ի ը հ ո զ ի ն չ ի խ ն ա -
յ ու մ , ե ն ա կ ե ս ե ս ի ը ու մ , ե ն ա կ ե ս ե ս ի ը ու մ :

Դ ա վ ի թ . — Ի ս կ Ս ու ը ե ն ն ի ն չ ա կ ե ս ե , լ ա Վ ե :

Շ ու շ ա ն . — Ի ն չ ու չ ե , կ ա ս ե ս փ չ ա ծ ա ղ ա ը կ
լ ի ն ի :

Դ ա վ ի թ . — Դ ե հ , հ ս ա ի ը , լ ա Վ յ ե զ ա Վ , վ ո ը
յ ե կ ա ը շ ա տ ու ը ա ի ե մ :

Շ ու շ ա ն . — Գ ու ը զ ե ն ն ու Ս տ ե փ ա ն ը ս ա ա -
ր ա ս ա Վ ու մ ե ն վ ա զ ը չ ե մ յ ու ս ո ը մ ե կ ն ե լ ու ի ն ձ ե ի ե
հ ե տ ը ք ա զ ա ք տ ա ն ու մ Գ ու ը զ ե ն ը : Ի ս կ վ ո ը ը չ ե ի ե ն
ք ե զ շ ա ն հ ա ն զ ս տ ա ց ն ե ի : Ա պ ը ի ը ի ն չ ա կ ե ս ու զ ու մ
ե ս . . . մ ե ն ա կ ե ս , կ ա ը ի ք չ ե ս ու ն ե ն ա , ն ե զ ու թ յ ու ն
չ ե ս ք ա ջ ի , Գ ու ը զ ե ն ն ե ի ք ե զ կ ո զ ն ի ե ն ս ե զ ի յ :

Դ ա վ ի թ . — (Ը ն կ ն ու մ ե Շ ու շ ա ն ի վ զ ո Վ) Շ ու -
շ ա ն , Շ ու շ ա ն , մ ի ն չ ե կ յ ա ն ք ի ս վ ե ը ջ ը յ ե ս ք ե զ ա -

նից չեմ բաժանվի. չես գնա, չե, մի գնա (Լաց
 և լինում):

Շ ու շ ա ն .— (Մեղմուժյամբ) Ի՞նչ պատահեց
 քեզ, յես չեմ կարողանում հասկանալ, դու զար-
 մանալի մարդ ես:

Դ ա վ ի թ .— (Ձեռքերը ցած գցելով գլուխը տա-
 րուրերում և) Յես հիմար եմ, Շ ու շ ա ն, բոլորովին
 հիմար: (Նստում և ընկնում և մտքերի հետեից: Լը-
 ություն). Հավատացել եմ աստծուն, հավատա-
 ցել եմ մարդկանց, իսկ հիմի... ինքս ինձ ել
 չեմ հավատում այլես: (Հեկեկալով նորից ընկնում
 և նրա վզով): Ինձ մի գցիր, մի թող մենակ, սի-
 րելի Շ ու շ ա ն:

Շ ու շ ա ն .— Դե տեսնո՞ւմ ես, վոր յես քեզ
 չեմ գցել, դու մեզ, բոլորիս գցեցիր, դու բոլո-
 րիս վճռեցիր:

Դ ա վ ի թ .— (Նստում և թախտի վրա, գլուխը
 կախ գցելով): Այո, այո, յես... եզ ճիշտ ե:

Շ ու շ ա ն .— (Նայում և վառարանին) Վոչ
 վառարանն ե վառած, վոչ ել տունն և սրբած,
 և ո՞վ գիտե՞ ինքն ել քաղցած ե: (Մոտենում և
 ամուսնուն) Հը, ինչո՞ւ գլուխդ կախեցիր. ինչի՞
 մասին պեսք և մտածենք. տղադ մարդ ե դար-
 ձել, աղջիկդ ել լավ մարդ ե առել, իսկ մենք,
 քանի վոր ձեռներս ու վոտներս պինդ են, կապ-

ընենք—եւ ի՞նչ դարդ ունենք. տեսա՞ր ի՞նչ լավ
յեղավ:

Դ ա վ ի թ. — (Յույց տալով սեղանի և գետնի
վրայի սուրբ գիրքն ու ավետարանը): Կորցրու զը-
րանց աչքիցս:

Շ ու շ ա ն. — (Շվարում շմում և) Ո՞ւր կորց-
նեմ դրանց ը... հ՛ր... (Վերցնում և գետնին ընկած
ավետարանը) Դրանք եստեղ կոխիվ են արել, ի՞նչ
ե, եղ սրբերը: (Վերցնում և գրքերը) կտանեմ առ-
այժմ կզցեմ խոհանոցը, հետո կծախենք հավա-
տացյալներին: (Թագ և կենում դռան քամակը և ան-
միջապես վերադառնում և): Եղ ի՞նչ ե պատահել
քեզ Դավիթ, եղ ի՞նչ հրաշք եմ տեսնում:

Դ ա վ ի թ. — (Աշխուժորեն վեր կենալով): Այ՛ն
Շ ու շ ա ն, հրաշք ե կատարվել:

Ներս ևն մտնում՝ Գուրգենը, Ստեփանը,
Սուրենը, Զվարթը:

IV.

ԴԱՎԻԹԸ, ՇՈՒՇԱՆԸ, ՍՍԵՓԱՆԸ, ԳՈՒՐԳԵՆԸ
ՍՈՒՐԵՆԸ ՅԵՎ ԶՎԱՐԹԸ

Դ ա վ ի թ. — (Հերթով բոլորի վրովն ընկնելով).
Ստեփան, Գուրգեն, ի՞մ սիրելի աղջիկ Զվարթ:
(Համբուրում և նայում և Զվարթին) Անճանաչելի

ցես դառել, ինչ առողջացել ու լցվել ես: (Ձեռքը Սուրենի ուսին ե դնում): Դու նույնպես, Սուրեն, կեցցես (Համբուրում ե նրան և Ձվարթին ու Սուրենին միասին քաշում, կրծքին ե կպցնում): Դեհ, քախտավոր լինեք, իմ վորդիներս, ցանկանում եմ ձեզ յերկար կյանք և առողջություն. իսկ իմ հասցրած վիրավորանքների համար ներեցեք ինձ, ծերուկ հիմարիս:

Սուրեն:—Ներիր մեզ, հայրիկ. ներիր Ձվարթին, վոր քո կամքին հակառակ գնաց, ինձ ել նրա համար, վոր նրան առա: Ուրիշ կերպ յես չեյի կարող վարվել, վորովհետև հավատացած եյի, վոր խաղաղ ճանապարհով յես նպատակիս չեյի հասնի:

Ստեփան:—Ճիշտ ես ասում, Սուրեն, յեթե դրա համար մերժում ստանայիր, ես յերգբ պետք ե քո վրա յերգեյինք:

Հարրամն

Ծառի տակին խաղ կանեմ,

Ձար ազոավին քար կանեմ,

Շան տղա շատ մի հաջա,

Մուկը մոթեզ կախ կանեմ:

Ձվարթ. — (Գրկում և համբուրում ե հորը) Հայրիկ, ինչ բարի յես, ինչ բախտավոր և ուրախ եմ յես:

Ստեփան. — (Կամացուկ դառնալով Շուշանին, գլխով դարձանք հայտնելով) Ինչ ե պատահել հարս:

Շուշան. — (Գոհ և բախտավոր կերպով ուրարձը) ով բարի մարդիկ, նայեցեք իմ ամուսնուն՝ Դավթին մի տեսեք, թե ինչպես ե հարութ թյուն առել:

Դավիթ. — Ստեփան, Գուրգեն, ինձ ներեցեք, ամեն ինչ ներեցեք, մոռացեք ձեզ հասցրածս վիրավորանքները: Յես ձեր բոլորին ել վիրավորել եմ, բայց չե վոր միաժամանակ յես բոլորիդ ել հասկացել եմ, կասես հարյուր փթանոց մի ծանր քար ե ընկել վզիցս և յես նորից եմ լույս աշխարհ յեկել, յես անաստված եմ:

Գուրգեն. — (Ուրախ) Ուրեմն նա յել մեզ հետ ե, ինչ ուրախություն:

Շուշան. — (Գուրգեն) Դեհ ուրեմն, վորդիս, յես այլևս քեզ հետ չեմ գալիս: Քսանվեց տարի հորդ հետ այս տանն ապրել եմ, եստեղ ել մեռնեմ:

Դավիթ. — Ախ, յերանի թե յես առաջուց ձեզ լսեյի, հիմի կովս տանը կլիներ և տերտերները չեյին լափի:

Սուրեն. — Հայրիկ, յես նգալիսի յերեք

Կով ունեմ, նրանցից վորն ուզում ես մեկը քեզ վերցրու:

Դա վիթ. — (Գրկում և Սուրենին) Ինձ չարագործիս, բարությամբ ես հասուցում:

Շուշան (Դավթի մոտ վազելով) Տեսնում ես ինչ տեսակ փեսա ունենք:

Զվարթ. — Վազը, հայրիկ, արի տես, թե ինչպես ենք մենք ապրում:

Սուրեն. — Անպայման սպասելու յինք:

Գուրգեն. — (Դառնալով դեպի բոլորը) Տեսա՞ք թե ինչպես ամեն բան լավ անցավ: Հիմաբ նախապաշարմունքներից բոլոր ազատվածներու հիմա պետք է ապրենք հանդիստ, աղնիվ և խաղաղ: Կրկնում եմ՝

Մեռան որերն են անցյալի,

Դարձել ենք բարեկամ սիրելի,

Զապրենք հնպես, ինչպես հնում

Ատաված ու ցարն հյին ապրում:

Բոլորս ել դարձել ենք անկախ,

Թող հազթանակի միշտ մուրճ-մտնդաղ,

Յեվ համարձակ միշտ դեպ առաջ

Զճանաչենք վոչ սուրբ, վոչ խաչ:


Դա վիթ. — (Կնոջը) Տեսնում ես ինչ ժամանակներ ենք ապրում յես ու դու, Շուշան-

(Կուրծքը բռնելով): Ո՛հ, ուրախությունից սիրտս
 ձաքում է:

Ստեփան.— (Ցույց տալով սուրբ գրքերի
 զատարկ դրակալը): Սուրբ գրքերն ինչ յեղան,
 սուրբ գրքերը:

Ընդհանուր ծիծաղ:

Վ Ա Ր Ա Կ Ա Ի Յ Ը



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045027

(184)

A $\frac{\bar{I}}{8209}$

ԳԻՆԸ 25 400.
